# ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ

## ՄԵՂՐԱԲԵՐՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՐՑԱՆԻՇ

Անցեալ տարի համամիութենական ցուցահանդէսում ներկայացուած էր Կրասնոտարսկի նշանաւոր մեղուաբոյծ, շքանշանակիր Վ. Ֆ. Շոլոկհինայի փորձը. մեղուի մի ընտանիքից նա ստացել էր 300 կիլոկրամ բերք՝ հասնելով մեղուատուութեան համաշխարհային ռեկորդի։

Հայկական ՍՍՌ Հողժողկոմատին կից Երեւանի անասնապահական փորձակայանի գիտական աշխատող-մեղուաբոյծ Անդրանիկ Կոթողեանը, հաշուի առնելով Շոլոկհինայի փորձը, սկսեց աշխատել նոր ռեկորդ խըփելու ուղղութեամբ։ Մեղուների ընտակերմանն արուեստականօրէն առաջացնելով, նա հասաւ մինչեւ հիմայ չտեսնուած արդիւնքի։ Նրա փորձարկած մեղուի ընտանիքը տուեց 367,8 կիլոկրամ մեղր, 116 կիլոկրամ մոմ եւ միաժամանակ՝ տուեց 11 նոր ընտանիքով։

Ռեսպուբլիկայի մի շարք կոլխոզներում — Մարտունիում, Բասարգեչարում, Կոտայքում, Վաղարշապատում եւ այլ շրջաններում այս տարի կիրառւում էր ընկ. Կոթողեանի մեթոդը։ Դա փայլուն արդիւնքներ տուեց։ Մեղուների իւրաքանչիւր ընտանիքից ստացուեց մինչեւ 240 կիլոկրամ մեղր, մինչդեռ միջին բերքատուութիւնն այդ շրջաններում կազմում էր 12 կիլոկրամ։

Մեղուաբոյծ Կոթողեանի մեթոդը մեծ հետաքրքրութիւն է առաջ բերել ՍՍՌ Միութեան զանազան մարզերում։ Ուկրաինայից, Բելառուսիայից, ՍՍՌՄ կեդրոնական մարզերից, բազմաթիւ թերթերից ստացւում են զանազան նամակներ՝ խնդրելով պատմել Կոթողեանի մեթոդի մանրամասնութիւնների գործելակերպը։ «Ս. Հ.»ից